

կամ փոխանորդն ասո՞նք են արդեօք, որ համար կը պահանջեն, եւ միթէ շեր Տէրութեան ծանօթ չէ՞, որ այս տուրքերը շեղի յանձնեցի, եւ Դուք ինծի հաստատական տուիք շեր կնքով։ Մինչ Զակոր լուռ կը կենար, Սարգիս ներկայացուց ընկալագիրը եւ կարդալ տուաւ լուի լու ամենեցուն. որուն վրայ Զակոր ամօթապարտ եւ նեղացած՝ յանդիմանեց ամբաստանիչները, եւ ասոնց ուրիշ զրպարտութիւնները ջրեց։ Ասոր վրայ ներկայ եկեղեցականք եւ իշխանք պահանջեցին, որ պատժուին եւ բանտարկուին ամբաստանողք։ Զակոր ստիպեց զիրենք զղջալու եւ Սարգսէն թողութիւն խնդրելու, զոր եւ Սարգիս սիրով շնորհեց, խրատելով ի մասնաւորի զՄանուէլ։ Եւ այնուհետեւ ամէնքն աւելի եւս սկսան յարգել զՍարգիս եւ ակնածիլ իրմէ։ Այս Մանուէլը յանդգնած էր նաեւ Մխիթարեանները նախատել, սակայն ճոռումարան Հ. Մկրտչին սուր գրչին հանդիպելով՝ ի սիրտ խոցուած էր։

Այսուհետեւ Սարգիս Արքեպ. Պալատու եկեղեցին կը բնակէր եւ կը քարոզէր։ Այնտեղ Սարգսի աշակերտեցաւ Սամաթիացի ուսումնասէր պատանին՝ Զարութիւն Պետանեան, որդի Նազեղիի եւ Զովհաննու, որ լաւ ուսանելէն ետեւ ուղեց թէպէտ եկեղեցական ըլլալ, բայց մնաց աշխարհական, եւ եղաւ վաճառական ի Կ.Պոլիս եւ 1772ին Սարգիսը, յետոյ Սամուէլ Եպ. Երզնկացին, Գրիգոր Պատրիարքն Պատմաճեան, եւ Զարութիւն Ար-